

Արմեն Ց. Մարուքյան
Պատմ. գիտ. թեկնածու

“Ignorantia non est argumentum”¹.
Benedictus de Spinoza

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու դեմ
ուղղված Պիեռ Նորայի «փաստարկները»*

Մուսր

Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող 2012 թ. հունվարի 23-ի օրենքի ընդունման դեմ քաղաքական շահարկումների մեջ ներգրավված հայտնի պատմաբան Պիեռ Նորան շարունակում է «հիմնավորել» իր ձևակերպմամբ՝ «հուշային օրենքների» ընդունման անթույլատրելիությունը՝ հիմնվելով գիտության ազատության, պատմաբաններին չկաշկանդելու և այլ դրույթների վրա: «Վեմ»-ի նախորդ համարում² անդրադարձ է կատարվել այդ նպատակով ֆրանսիական ակադեմիայի անդամի կողմից բերվող պատմագիտական հիմնավորումներին, մասնավորապես՝ «ցեղասպանություն» երևույթի ընկալմանը՝ պատմության ու հիշողության հարաբերակցության տիրույթում: Ներկա հրապարակման մեջ կփորձենք խնդիրը քննարկել պատմաիրավական դիտանկյունից՝ նախապես գնահատելով օրենքի ընդունման գործընթացն ու դրան հաջորդած զարգացումները:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 11.06.2013:

1 «Չիմացությունը փաստարկ չէ» - **Քենեդիկո Սպինոզա**: Ավելի մանրամասն տե՛ս Лемешко В.М., Методические рекомендации по изучению латинского языка. Юридическая фразеология и термины, М., 2008, с. 29.

2 Տե՛ս Հովհաննիսյան Ս., Պատմություն և հիշողություն: Ցեղասպանությունների աստիճանավարգման հիմնախնդիրն ըստ Պիեռ Նորայի, «Վեմ», Եր., 2013, թիվ 1 (41), էջ 12-33:

1. Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող ֆրանսիական օրենքի ընդունումը

ՀԻՄՆԱՔԱՐԵՐ

Ե (ՃԵ) քառի, թիվ 2 (42) ապրիլ-հունիս, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

Ինչպես հայտնի է, 2012 թ. հունվարի 23-ին Ֆրանսիայի խորհրդարանի վերին պալատը վերահաստատեց ստորին պալատի կողմից ընդունված օրենքը, որի համաձայն՝ քրեական պատասխանատվություն էր սահմանվում նաև Հայոց ցեղասպանությունը ժխտողների համար: Մեզանում թյուր կարծիք է ձևավորվել, թե տվյալ օրենքով քրեականացվում էր բացառապես Հայոց ցեղասպանության ժխտումը, ուստի հարկ ենք համարում ներկայացնել օրենքի բովանդակությունը:

Մենատի դժնբաց նիստում ընդունված օրենքի 1-ին հոդվածը սահմանում էր. 1881 թ. հուլիսի 29-ի «Մամուլի ազատության մասին» օրենքի IV գլխի 1-ին մասը լրացնել 24.3 հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 24.3. և 24.2 հոդվածներում նախատեսված տուգանքները կիրառվում են այն անձանց նկատմամբ, որոնք, հոդված 23-ում շարադրված միջոցներով, վիճարկում են կամ վիրավորելու աստիճան նվազեցնում են մեկ կամ մի քանի ցեղասպանության եղելությունը, ինչպես դրանք սահմանված են Քրեական օրենսգրքի 211.1 հոդվածում և որպես այդպիսիք ճանաչված են Ֆրանսիայի օրենքով»³: Նույն հոդվածում նշվում է, որ «Դատարանը կարող է նաև կարգադրել կայացված վճռի հրապարակումը և տարածումը Քրեական օրենսգրքի 131-135 հոդվածներով նախատեսված այսմաններով»⁴:

Իսկ օրենքի 2-րդ հոդվածը նախատեսում էր, որ նույն օրենքի 48.2 հոդվածը փոփոխվում է հետևյալ ձևակերպմամբ.

1. «արտաքսված» բառից հետո ներառել հետևյալ բառերը՝ «կամ ցեղասպանության, ռազմական հանցագործությունների, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների կամ հակառակորդի հետ համագործակցության հանցագործության կամ իրավախախտման ցանկացած այլ գոհ»⁵:

2. Վերջում «24.2-ում գետեղված» բառերը փոխարինել «24.2 և 24.3 հոդվածներում սահմանված հանցագործություն» բառերով⁶:

Ինչպես տեսնում ենք՝ խոսքը ոչ թե բացառապես Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացմանն է վերաբերում, այլ «Ֆրանսիայի օրենքով որպես այդպիսին ճանաչված մեկ կամ մի քանի ցեղասպանությունների»: Մինչդեռ հայտնի է, որ ֆրանսիական օրենսդրությամբ որպես ցեղասպանություն են ճանաչվել հրեական Հոլոքոստը, իսկ 2001 թ. հունվարի 29-ի օրենքով՝ նաև Հայոց ցեղասպանությունը:

Հիշեցնենք նաև, որ Ֆրանսիայի օրենսդիր մարմինը դեռ 1990 թվականին է հիմք դրել ցեղասպանության հանցագործության ժխտումը քրեականացնելու գործընթացին, երբ հուլիսի 13-ին ընդունվել է այսպես կոչված՝ «Գեյտյի օրենքը», որով փոփոխություններ են կատարվել 1881 թ.

3 Proposition de Loi Anti-négationnisme ter pdf – 16.12.2012, 23H43.pdf
www.philippekrikorian-avocat.fr

4 Ibid.

5 Ibid.

6 Ibid.

հուլիսի 29-ի «Մամուլի ազատության մասին» օրենքում: Դրա հետևանքով մեկ տարի ազատագրվում էր սահմանվելու և/կամ 45000 եվրո տուգանք էր կիրառվելու նացիստական հանցագործությունները ու մասնավորապես՝ հրեական Հոլոքոստը ժխտողների նկատմամբ⁷:

Այսինքն՝ 2012 թ. հունվարի 23-ի օրենքով փաստորեն նախատեսվում էր «Գեյտյի օրենքով»՝ «Մամուլի ազատության մասին» օրենքի հիման վրա, հրեական Հոլոքոստի ժխտման համար նախատեսված պատժամիջոցները տարածել նաև Ֆրանսիայի կողմից օրենքով ճանաչված Հայոց ցեղասպանության ժխտման վրա: Նոր օրենքով, ըստ էության, հավասարության նշան էր դրվում երկու նույնական հանցագործությունների միջև արդեն ոչ միայն ճանաչման, այլև դրանց գոհերի հիշատակը և տուժած ժողովուրդների զգացմունքները հարգելու առումով:

Սակայն, ինչպես հայտնի է, Սենատի կողմից օրենքի ընդունումից հետո՝ 2012 թ. հունվարի 31-ին, 76 պատգամավորների և 72 ծերակուտականների ստորագրությամբ հարցը փոխանցվեց Սահմանադրական խորհրդի քննարկմանը: Սահմանադրական խորհուրդ դիմած պատգամավորները գտնում էին, որ տվյալ օրենքով խախտվում են խոսքի, խղճի և համոզմունքի ազատության սկզբունքները:

2. Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի որոշումը Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի վերաբերյալ

Սահմանադրական խորհուրդը որոշում ընդունելուց օրեր առաջ՝ 2012 թ. փետրվարի 4-ին, այդ մարմինը իր պաշտոնական կայքէջում տեղադրել էր «Օրենքի նորմատիվային ուժի կամ նորմատիվային հիմքի բացակայությունը» վերնագրով գրքույկը, որը վերաբերում էր 2001 թ. հունվարի 29-ի 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման օրենքին, ինչը գնահատվում էր իբրև ոչ նորմատիվային կամ անորոշ նորմատիվությամբ ակտ⁸: Դրանով Սահմանադրական խորհուրդը ցանկանում էր ընդգծել օրենքի հոչակագրային բնույթ ունենալու հանգամանքը, անտեսելով այն իրողությունը, որ նախագահ Ժակ Շիրակի և վարչապետ Լիոնել ժոսպենի կողմից ստորագրված այդ օրենքի միակ հոդվածում ամրագրված է. «Ֆրանսիան հրապարակայնորեն ճանաչում է 1915 թ. հայերի ցեղասպանությունը: Ներկայիս օրենքը պետք է իրագործվի իբրև պետական օրենք»⁹: Հատկանշական է, որ Սահմանադրական խորհուրդը, որը

7 Stéu Assignation en Refere Par-devant Monsieur le President du Tribunal de Grande Instance de Marseille aux fins de Constatation d'une voie de fait Administrative et d'Injonction
www.philippekrikoriant-avocat.fr

8 Stéu Constats d'huissier en date des 30 Janvier et 2 Février 2012 établissant la preuve d'une publication en trente-trois pages figurant sur le site internet officiel du Conseil Constitutionnel, mettant à l'index la loi du 29 Janvier 2001, réputée être non normative, laquelle publication constitue une infraction manifeste au devoir d'impartialité et à l'obligation de réserve des membres du Conseil Constitutionnel expressément prévue par les dispositions de leur statut Janvier 2012
www.philippekrikoriant-avocat.fr

9 Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарии. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария

տվյալ օրենքի ընդունումից հետո որևէ մեկնաբանություն չէր տվել, միայն նոր օրենքի վերաբերյալ դիրքորոշում հայտնելուց անմիջապես առաջ որոշեց, որ 2001 թ. հունվարի 29-ի օրենքը «ոչ նորմատիվային կամ անորոշ նորմատիվությամբ ակտ է»:

Հատկանշական է նաև, որ 2007 թ. դեկտեմբերի 12-ին Շվեյցարիայի Դաշնային դատարանը, մերժելով Հայոց ցեղասպանությունը ժխտելու մեղադրանքով այդ երկրի քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետով դատապարտված Դոդու Փերինչեքի վերաքննիչ բողոքն ընդդեմ Շվեյցարիա-Հայաստան ասոցիացիայի, հիմնվում էր նաև Հայոց ցեղասպանությունը ճանաչող Ֆրանսիայի օրենքի վրա: Իր որոշման մեջ շվեյցարական դատարանը նշում էր, որ «կա ընդհանուր համոզմունք, այդ թվում նաև՝ գիտական աշխարհում, որ 1915 թ. փաստերը որակվում են իբրև ցեղասպանություն, որով էլ արդարացվում է քրեական օրենսգրքի կիրառումը, անգամ խոստովանության բացակայությամբ և առանց այդ հարցի շուրջ պատմաիրավական բանավեճեր սկսելու անհրաժեշտության»¹⁰: Որպես մերժման հիմք շվեյցարական դատարանը հղում էր կատարել Ֆրանսիայի 2001 թ. հունվարի 29-ի օրենքին¹¹: **Ջավեշտ է, բայց փաստ, որ շվեյցարական դատարանն իր վճռի համար հիմք էր ընդունել Ֆրանսիական այն օրենքը, որը Ֆրանսիայի Սահմանադրական դատարանը հետագայում որակեց իբրև ոչ նորմատիվային ակտ:**

Տարօրինակ է նաև, որ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը 2012 թ. դեկտեմբերի 6-ին նույն սկզբունքներից ելնելով, այդ երկրի խորհրդարանի կողմից ընդունված «Ալժիրի քաղաքացիական պատերազմի և Թունիսում ու Մարոկկոյում պատերազմական գործողությունների գոհերի ազգային հիշատակի և լռության օր սահմանելու մասին» օրենքը չորակեց որպես «ոչ նորմատիվային կամ անորոշ նորմատիվությամբ ակտ»: Սահմանադրական խորհուրդ դիմած պատգամավորներն էլ, իրենց հերթին, ազատությունների խախտում չնկատեցին այն ժամանակ, երբ 2003 թ. մարտի 18-ին Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 433-5-1 հոդվածում փոփոխություններ կատարելու արդյունքում ազգային օրհներգի կամ դրոշի հրապարակային անարգանքը պատժվում էր 7500 եվրո գումարով և/կամ վեց ամիս ազատազրկմամբ: Օրենքի տվյալ փոփոխությունների իրավական հիմնավորումը թերևս նրանում էր, որ 1789 թ. «Մարդու և քաղաքացու իրավունքների» հռչակագրի 11-րդ հոդվածի համաձայն՝ մարդը կարող է ազատ արտահայտել իր մտքերն ու տեսակետները, ազատորեն կարող է խոսել, հրատարակել դրանք, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք չարաշահվում են, և այդ չարաշահումները սահմանափակվում են օրենքով¹²: Առ այդ՝ Ֆրանսիայի հիմնական օրենքի՝ Սահմանադրության 2-րդ հոդվածում ամրագրված է, որ ազգային դրոշը եռագույնն է, իսկ օրհներգը՝ Մարսելյեզը¹³: Այսինքն՝ դրանով սահմանափակվում են վերը

д.и.н., профессор Ю.Г.Барсегов, т. 2, ч.1. М., 2003, с. 818.

¹⁰ Assignation en Refere Par-devant Monsieur le President du Tribunal de Grande Instance de Marseille aux fins de Constatation d'une voie de fait Administrative et d'Injonction
www.philippekrikorian-avocat.fr

¹¹ Ibid.

¹² Французская Республика: Конституция и законодательные акты, М., 1989, с. 28.

¹³ Տե՛ս նույն տեղում, с. 3.

նշված ազատությունները այդ խորհրդանիշների նկատմամբ, և ցանկացած գործողություն դրանց դեմ դիտվում է իբրև իրավունքի չարաշահում և պատժվում է՝ համաձայն օրենքում կատարված փոփոխությունների:

Ուրեմն՝ երկակի ստանդարտներով ու քաղաքական նպատակահարմարությամբ, այլ ոչ թե օրենքի միատեսակ կիրառմամբ առաջնորդվող ֆրանսիացի օրենսդիրներն ու Սահմանադրական խորհրդի դատավորները իրենց գործողություններով ամեն ինչ անում էին Հայոց ցեղասպանությունը ճանաչող Ֆրանսիայի օրենքը հռչակագրային փաստաթուղթ ներկայացնելու և այդ հանցագործության ժխտման համար արդեն իսկ պատիժ նախատեսող օրենքի հիմքերը թուլացնելու համար, որպեսզի հնարավոր լինի «հիմնավորել» նոր օրենքի «հակասահմանադրականությունը»:

Սակայն չպետք է նաև մոռանալ, որ նախքան պաշտոնական որոշման հրապարակումը Սահմանադրական խորհրդի նման գործողությունները համարվում են ֆրանսիական օրենսդրության կոպիտ խախտում: Բանն այն է, որ համաձայն Սահմանադրական խորհրդի անդամների պարտականությունների վերաբերյալ 1958 թ. նոյեմբերի 7-ի և 1959 թ. Հրամանագրերի, դատավորները պետք է լինեն բացարձակ անկողմնակալ և մինչև վճռի հրապարակումը ձեռնպահ մնան նախնական դիրքորոշումներ արտահայտելուց՝ այն գործերի վերաբերյալ, որոնք գտնվում են իրենց ընդդատության ներքո:

Այսպես, համաձայն 1958 թ. նոյեմբերի 7-ի հրամանագրի 3-րդ կետի՝ Սահմանադրական խորհրդի անդամները երդվում են հանրապետության նախագահի առաջ բարելոջձորեն կատարել իրենց պարտականությունները, գաղտնիության մեջ պահել իրենց քննարկումները և խորհրդակցություններ չկատարել այն հարցերով, որոնք մտնում են խորհրդի իրավասության ներքո: Ավելին՝ 1959 թ. նոյեմբերի 13-ի հրամանագրի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական խորհրդի անդամները պարտավորվում են ձեռնպահ մնալ այն ամենից, ինչը կարող է կասկածի տակ դնել իրենց գործառնությունների կատարման անկախությունն ու արժանապատվությունը: Իսկ նույն փաստաթղթի 2-րդ կետով նրանք իրենց գործունեության ընթացքում պետք է ձեռնպահ մնան պետական պաշտոնյաներին խորհրդատվություն տրամադրելուց այն հարցերի հետ կապված, որոնք ընդունվել են կամ կարող են ընդունվել խորհրդի իրավասությունների ներքո¹⁴:

Հաշվի առնելով այս ակնհայտ խախտումները՝ մարսելահայ փաստաբան Ֆիլիպ Գրիգորյանը ստեղծված իրավիճակում առաջարկում էր Ֆրանսիայի նախագահ Նիկոլյա Սարկոզիին ուղղակի ստորագրել և հրապարակել 2012 թ. հունվարի 23-ի օրենքը, որովհետև նախնական կարծիք հայտնելով, Սահմանադրական խորհուրդը արդեն իսկ գերազանցել էր իր իրավասությունները, և հունվարի 23-ի օրենքը այլևս չէր կարող մնալ

14 *Stén Constats d'huissier en date des 30 Janvier et 2 Février 2012 établissant la preuve d'une publication en trente-trois pages figurant sur le site internet officiel du Conseil Constitutionnel, mettant à l'index la loi du 29 Janvier 2001, réputée être non normative, laquelle publication constitue une infraction manifeste au devoir d'impartialité et à l'obligation de réserve des membres du Conseil Constitutionnel expressément prévue par les dispositions de leur statut/Janvier 2012*
www.philippekrikorian-avocat.fr

նրա ընդդատության տակ¹⁵: Սակայն, չնայած նախապես Երևանում տված իր խոստումներին, նախագահ Սարկոզին ոչինչ չձեռնարկեց և սպասեց Սահմանադրական խորհրդի կանխատեսելի որոշմանը:

2012 թ. փետրվարի 28-ին Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը հակասահմանադրական ճանաչեց 2012 թ հունվարի 23-ին Սենատի կողմից ընդունված օրենքը, որը հանդիսանում էր 2001 թ. հունվարի 29-ի Հայոց ցեղասպանության ճանաչման օրենքի տրամաբանական շարունակությունը և նախատեսում էր քրեական պատասխանատվություն սահմանել նաև Հայոց ցեղասպանության ժխտման համար, ինչը արդեն արվել էր հրեական Հոլոքոստի առնչությամբ: Բայց, տարօրինակ կերպով, Սահմանադրական խորհուրդն իր որոշման 1-ին հոդվածով օրենքը ճանաչեց Ֆրանսիայի սահմանադրությանը հակասող այն հիմնավորմամբ, որ տվյալ օրենքով խախտվում է 1789 թ. «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում», այլ ոչ թե Սահմանադրությունում ամրագրված խոսքի ազատությունը¹⁶:

Ուրեմն **Սահմանադրական խորհրդի այս որոշման տրամաբանությամբ հակասահմանադրական պետք է ճանաչվեր նաև 1990 թ. «Գեյ-սոյի օրենքը», քանզի այն նույնպես հակասում էր 1789 թ. «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» խոսքի ազատության սկզբունքին: Այսպիսով՝ ֆրանսիական օրենսդրությունը փաստորեն խտրականություն մտցրեց երկու նույնանման հարցերի իրավական գնահատման գործընթացում:**

3. Եվրամիության 2008 թ. նոյեմբերի 28-ի Շրջանակային համաձայնագիրը և Ֆրանսիայի պարտավորությունները

Սակայն խնդիրը ավելի լուրջ է, քան կարող է թվալ առաջին հայացքից, որովհետև այն չի սահմանափակվում լոկ Ֆրանսիայի ներպետական օրենսդրությամբ, այլ առնչվում է նաև համաեվրոպական օրենսդրությանը: Իր որոշմամբ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը փաստորեն խոչընդոտներ է ստեղծել նաև Եվրամիության առջև Ֆրանսիայի ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացում: Բանն այն է, որ Ֆրանսիան Եվրամիության մյուս երկրների հետ մեկտեղ 2008 թ. նոյեմբերի 28-ին ստորագրել է «Ռասիզմի և այլատյացության որոշ դրսևորումների դեմ քրեական իրավունքի համապատասխանեցման միջոցով պայքարելու մասին» շրջանակային համաձայնագիրը¹⁷:

Շրջանակային համաձայնագրի անդամ պետությունները, այդ թվում՝ Ֆրանսիան, փաստաթղթի նախաբանում ընդգծում են, որ ռասիզմն ու այլատյացությունը հանդիսանում են ազատության սկզբունքների, ժո-

15 Stiu Krikorian P. «Conformément à la Constitution, le Président de la République doit promulguer sans délai la loi Boyer-Krikorian de pénalisation de la négation des génocides votée le 23 Janvier 2012 www.philippekrkorian-avocat.fr

16 Stiu <http://www.conseil-constitutionnel.fr/conseil-constitutionnel/francais/les-decisions/acces-par-date/decisions-depuis-1959/2012/2012-647-dc/decision-n-2012-647-dc-du-28-fevrier-2012.104949.html>

17 Stiu Le Genocide Armenien et la primaute du droit de l'Union Europeenne www.philippekrkorian-avocat.fr

ղովրդավարության, մարդու իրավունքների և ազատությունների և օրենքի գերակայության ուղղակի խախտումներ, այն սկզբունքների, որոնց վրա հիմնված է Եվրամիությունը և որոնք ընդհանուր են անդամ պետությունների համար¹⁸:

Ելնելով դրանից՝ համաձայնագրի 1-ին հոդվածի 4-րդ կետով սահմանվում է, որ համաձայնագրի ընդունումից հետո Եվրամիության յուրաքանչյուր անդամ-պետություն պետք է հանդես գա հայտարարությամբ, որ քրեական օրենսդրությամբ պատժելի է դարձնելու 1-ին կետի c և/կամ d կետերում նշված հանցագործությունների ժխտումը կամ անարգումը, որոնց վերաբերյալ անդամ պետությունների դատարանի կամ միջազգային դատական ատյանի կողմից որոշում է կայացվել քաղաքացու նկատմամբ: Շրջանակային համաձայնագրի անդամ երկրների քրեական օրենսդրության փոփոխությունները պետք է տարածվեն այն դրույթների վրա, որոնք սահմանված են Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներում: Այսպիսով, քրեական իրավունքի կողմից պատժելի են դիտվելու մասնավորապես՝ ցեղասպանության, մարդկության դեմ կատարված հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների հրապարակային անարգումը և ժխտումը¹⁹:

Ասվածից ակնհայտ է, որ միայն հրեական Հոլոքոստի ժխտումը չէ, որ համապատասխանում է նման հանցագործությունների տեսակներին, այլ նկատի է առնվում, որ անդամ-պետությունները ազատ են քրեական պատասխանատվությունը տարածելու նման հանցագործությունների այլ օրինակների վրա, եթե տվյալ պետության սահմաններում դրանք համապատասխան որակում են ստացել:

Որպես Շրջանակային համաձայնագրի կատարման վերջնաժամկետ էր ֆիքսված 2010 թ. նոյեմբերի 28-ը, այսինքն՝ սեփական օրենսդրության համապատասխանեցման համար անդամ-պետություններին տրվում էր երկու տարի ժամանակ: Սակայն այդ ժամկետներում Ֆրանսիան ոչ մի քայլ դեռևս չէր ձեռնարկել տվյալ ուղղությամբ: Այս առումով 2012 թ. հունվարի 23-ի օրենքը նշված պարտավորությունների կատարման մի փորձ էր, որը փաստորեն ձախողվեց Սահմանադրական խորհրդի փետրվարի 28-ի որոշմամբ: Այսպիսով, կարելի է փաստել, որ Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի որոշումը որոշակիորեն հակասում է նաև 2008 թ. նոյեմբերի 28-ին Եվրամիության Խորհրդի կողմից ընդունված Շրջանակային համաձայնագրի պահանջներին և խախտում է այդ կառույցի առջև Ֆրանսիայի ստանձնած պարտավորությունները:

Շրջանակային համաձայնագրի կիրարկման վերաբերյալ իրենց տեսակետներն են հայտնել Ֆրանսիացի մի շարք պատասխանատու գործիչներ: Հաշվի առնելով այն, որ համաձայնագիրը ազգային իշխանությունների հայեցողությանն է թողել իր դրույթների կատարման ձևերի և մեթոդների ընտրությունը, Ֆրանսիայի ներքին գործերի նախարար Միշել Ալիո-Մային, ներգաղթի և ինտեգրման նախարար Բրիո Օրտեֆեն և

18 Ibid.

19 Stén Le droit a la dignite et la liberte d'expression face aux crimes contre l'humanite
www.philippekekrikorian-avocat.fr

արդարադատության նախարար Ռալիդա Ցատին կազմեցին համատեղ նախագիծ, համաձայն որի՝ 2008 թ. նոյեմբերի 28-ի Շրջանակային համաձայնագիրը կարող է վերաբերել այն հանցագործություններին, որոնք սահմանվել են միջազգային արդարադատության կողմից կայացված վերջնական դատավճիռներով²⁰:

Այսպիսով, Ֆրանսիայում փորձում էին եվրամիության 2008 թ. նոյեմբերի 28-ի Շրջանակային համաձայնագրի պահանջների կիրառումը սահմանափակել միայն հրեական Հոլոքոստով և այդ կերպ մի կողմից՝ չձայնողել Ֆրանսիայում Թուրքիայի տարվա միջոցառումները, իսկ մյուս կողմից՝ մեղմել ֆրանս-թուրքական հարաբերությունների լարվածությունը և հիմքեր նախապատրաստել դրանց նորմալացման համար:

4. Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող ֆրանսիական նոր օրինագիծը

Ինչպես հայտնի է, Սահմանադրական խորհրդի որոշումից հետո Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզին կառավարությանը հանձնարարեց մշակել օրենքի նոր նախագիծ, ինչը, կարծում ենք, ավելի շատ ցուցադրական գործողություն էր, որով նա փորձում էր հայկական համայնքի առջև քավել վճռական պահին անգործություն ցուցաբերելու իր մեղքը:

Ինչ վերաբերում է օրենքի նոր նախագծի նախապատրաստմանը, ապա նախ՝ հարկավոր էր հստակեցնել, թե այն ինչ իրավական հիմքի վրա պետք է խարսխվի, որպեսզի Սահմանադրական խորհրդի կողմից նախկինի նման չհամարվի հակասահմանադրական: Անկասկած, նախկինի նման, այն այլևս չէր կարող հիմնվել «Գեյսոյի օրենքի» վրա, ուստի միանգամայն իրավացի էին օրենքի նոր նախագծի հեղինակները, որ նոր նախագծի հիմք ընդունեցին հենց եվրամիության 2008 թ. նոյեմբերի 28-ի Շրջանակային համաձայնագիրը:

2013 թ. փետրվարի 6-ին Վալերի Բուայեն և իր հինգ գործընկերները օրենքի նոր նախագիծ ներկայացրին ֆրանսիական խորհրդարանին՝ «Ազգային օրենսդրությունը եվրամիության խորհրդի 2008 թ. նոյեմբերի 28-ի «Ռասիզմի և այլատյացության առանձին ձևերի և բացասական դրսևորումների դեմ քրեական օրենսդրության միջոցով պայքարելու մասին» Շրջանակային համաձայնագրի դրույթներին համապատասխանեցնելու մասին»:

Նոր օրինագծի 1-ին հոդվածի համաձայն՝ 1881 թ. հուլիսի 29-ի «Մամուլի ազատության մասին» օրենքի 24a հոդվածը հարկ է վերաշարադրել հետևյալ կերպ.

«այն անձինք, ովքեր խտրականություն, ատելություն և բռնություն են քարոզում, կպատժվեն երկու տարի ազատազրկմամբ և/կամ 45000 եվրո տուգանքով 24-րդ հոդվածի 6-րդ կետում նշված գործողությունների հա-

20 Stén Lettre-circulaire à adresser aux Parlementaires français aux fins de dépôt de la proposition de loi tendant à la transposition en droit interne de la Décision-cadre du 28 Novembre 2008
www.philippekrikorian-avocat.fr

ՀԻՄՆԱՔԱՐԵՐ
2013
ապրիլ-հունիս, 2013
Ե (ԺԵ) քառի, թիվ 2 (42)
համահայկական հանդես
ՎԷՄ

մար՝ մեկ կամ մի քանի ցեղասպանությունների, մարդկության դեմ կատարված հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների եղելությունների վիճարկում, ներառյալ ըստ ժամանակագրության դասակարգված հանցագործությունների հետևյալ ցանկը՝

- ստրկությունը և մարդկանց վաճառքը,
- Հայոց ցեղասպանությունը,
- հանցագործություններ, որոնք սահմանված են Լոնդոնի 1945 թ.

օգոստոսի 8-ի համաձայնագրին կցված Միջազգային ռազմական տրիբունալի կանոնադրության 6-րդ հոդվածում:

Այս հոդվածի տրամաբանությունից ելնելով, արգելվում է նշված հանցագործությունների ժխտումը կամ վիրավորելու աստիճան նսեմացումը, ինչպես նաև դրանց հանդեպ կասկած առաջացնող նվաստացուցիչ այնպիսի բառերի կամ ձևակերպումների կիրառումը, ինչպիսիք են օրինակ՝ «այսպես կոչված», «ենթադրյալ», «հիպոտեթիկ», «ինքնակոչ» հասկացությունները»²¹:

Իսկ 2-րդ հոդվածի համաձայն՝ «Մամուլի ազատության մասին» օրենքի 48.2 հոդվածը պետք է փոփոխել հետևյալ կերպ՝ «արտաքսված» բառից հետո ներառել «կամ ցանկացած այլ զոհի» բառերը»²²:

Ակնհայտ է, որ սույն օրենքի նախագծով փաստորեն վերանայվում է 1990 թ. հուլիսի 13-ի «Գեյտյի օրենքը», որով մինչ այդ նույնպես փոփոխություններ էին կատարել 1881 թ. հուլիսի 29-ի «Մամուլի ազատության մասին» օրենքի 24a հոդվածում: Գեյտյի օրենքով նախատեսվում էր նացիստական հանցագործությունները և մասնավորապես՝ հրեական Հոլոքոստը ժխտողներին պատժել մեկ տարի ազատազրկման և/կամ 45000 եվրո տուգանքով: Իսկ նոր օրինագծով նախ՝ ավելացել է այն հանցագործությունների ցանկը, որոնց ժխտումը քրեականացվում է, ներառելով ոչ միայն Հայոց ցեղասպանությունը, այլև ստրկությունն ու մարդկանց վաճառքը, և բացի այդ, խստացվել է պատժաչափը՝ մեկ տարի ազատազրկումից դարձնելով երկու տարի:

5. Պիեռ Նորայի մտավարժանքները Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի շուրջ

Նախքան 2012 թ. հունվարի 23-ի օրենքի ընդունումը և դրանից հետո Ֆրանսիայում անընդհատ շահարկումներ էին կատարվում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու հարցի շուրջ: Դրանով զբաղվում էին ոչ միայն թուրքամետ քաղաքական գործիչները, այլև որոշ մտավորականներ, որոնք ջանում էին օրենքի մերժման առաջադրանքի լուծումը տեղափոխել «գիտական հիմքերի» վրա: Նրանց շարքում էր «Ազատություն հանուն պատմության» կազմակերպության հիմնադիր ու նախագահ, նշանավոր պատմաբան Պ. Նորան: Նա իր համախոհների անունից հայտարարում էր, որ պատմությունը իրավաբանական օբյեկտ չէ, և ազատ պետության մեջ ոչ պառլամենտը, ոչ էլ դատական իշխանությունը

21 Proposition de Loi PK-VB depose le 06.02.2013.pdf www.philippekrikorian-avocat.fr

22 Ibid.

չպետք է սահմանեն պատմական ճշմարտությունը²³: Պ. Նորայի նման դատողություններն ու եզրակացությունները ճիշտ ընկալելու համար հարկ է դրանք պայմանականորեն բաժանել մի քանի խմբի:

ա) Հրեական Շոան բացառիկ է, ուստի «Գեյտյի օրենքը» նույնպես պետք է լինի բացառիկ

Քանի որ Պ. Նորան դեմ է իր ձևակերպմամբ՝ «հուշային օրենքներին», ապա նա հավասարապես պետք է դեմ դուրս գար նաև «Գեյտյի օրենքին», որով պատասխանատվություն է սահմանվում հրեական Հոլոքոստը ժխտողների համար, և որը նախադեպ է հանդիսացել նաև Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի համար: Սակայն պատմության «անաղարտության» համար պայքարող գիտնականը, միմյանց հակադրելով Հայոց ցեղասպանությունը և հրեական Շոան, վերջինս համարում է բացառիկ ու եզակի երևույթ և դեմ է դուրս գալիս այս երկու նույնանման հանցագործությունների միջև հավասարության նշան դնելուն: Պ. Նորայի բնորոշմամբ՝ հայկական «ցեղասպանության» և Շոայի միջև պատմական զուգահեռը բացարձակապես անընդունելի է: Ուստի նա հայտարարում է, որ ինքը և իր համախոհները երբեք չեն խնդրել վերացնել «Գեյտյի օրենքը», քանի որ այն ուղղված էր ոչ թե պատմագետներին, այլ պատմական կեղծիքի ակտիվիստներին, սակայն «Գեյտյի օրենքը» չի կարող նախադեպ դառնալ այլ օրենքների համար²⁴:

Ուստի Պ. Նորան չբողոքեց «Գեյտյի օրենքի» դեմ, բայց լուռ էր, երբ ժամանակակից Թուրքիայում ազատագրկման էին ենթարկվում մարդիկ, ովքեր խոսում էին Հայոց ցեղասպանության մասին: Ավելի քան ակնհայտ է, որ սովյալ դեպքում խոսքը ոչ թե խոսքի կամ գիտության ազատության, այլ այդ ազատության չարաշահման մասին է: Ասվածից հասկանալի է, որ ֆրանսիացի պատմաբանը որպես հարցի «լուծման» տարբերակ առաջարկում է **ընտրողաբար** կիրառել իր «տեսությունը», կատարել երկու ցեղասպանությունների աստիճանակարգում ընդունելով հրեաների ցեղասպանության ժխտման քրեականացումը և չընդունելով հայերինը:

Ստորադասելով Հայոց ցեղասպանությունը հրեական Հոլոքոստին, Պ. Նորան անհրաժեշտություն չի տեսնում, որ ֆրանսիական խորհրդարանը որակում տա «սովից մահացած» վիթխարի քանակությամբ մարդկանց ողբերգությանը²⁵:

Ցավալի է, որ հեղինակավոր պատմաբանը տեղյակ չէ կամ, համենայնդեպս, ի ցույց է դնում իր անտեղյակությունը Առաջին աշխարհամարտի պատմության փաստերի վերաբերյալ: Հազիվ թե Պ. Նորային՝ իբրև պատմաբանի, հայտնի չլինի, որ հայերի ծրագրված ու զանգվածային բնաջնջման ժամանակ մարդիկ մահացել են ոչ միայն և ոչ այնքան սովից: Իսկ արհեստական սովի ստեղծումը համապատասխանում է ցեղասպանության հանցագործության ՄԱԿ-ի 1948 թ. Կոնվենցիայի հանցակազմի՝ կենսագոր-

23 Տե՛ս L'appel du 12 décembre, URL:// http://www.lph-asso.fr/index.php?option=com_content&view=article&id=2&Itemid=13&lang=fr
24 Տե՛ս П. Нора: «Историки поняли, что законы – очень опасная вещь» URL:// <http://urokiistorii.ru/current/view/2010/31/nora-oi>
25 Տե՛ս նույն տեղում:

ՀԻՄՆԱՔԱՐԵՐ
Ե (ԺԵ) քարի, թիվ 2 (42) ապրիլ-հունիս, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

ծունելության համար այնպիսի անմարդկային պայմանների ստեղծումը, որը միտված է նրա լրիվ կամ մասնակի ոչնչացման դրույթին²⁶: Սակայն, բացի դրանից, ավելի մեծ թվով հայեր ոչնչացվել են զանգվածային սպանությունների, մարմնական ծանր վնասվածքներ հասցնելու, ծնելիության կանխման ուղղված միջոցառումների հետևանքով, իսկ հայ որբերին բռնի փոխանցում էին թուրքական և քրդական ընտանիքներ, այդ կերպ նրանց հեռացնելով իրենց ազգային արմատներից: Դրանք բոլորն իբրև ցեղասպանության հանցագործության հանցակազմը բնորոշող հանցավոր գործողություններ, ամրագրված են ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայում, ձիշտ այնպես, ինչպես հայերին սովի մատնելու միջոցով ոչնչացնելը:

Ի դեպ, ցեղասպանությունները համեմատելու և աստիճանակարգելու ջատագով Պ. Նորան թերևս պետք է իմանա, որ ժամանակակից ցեղասպանագիտության մեջ Հայոց ցեղասպանությունը և հրեաների Հոլոքոստը ընդունված է դասել ցեղասպանությունների **դասական օրինակների** շարքը, քանզի այդ երկու օրինակներն են, որ լիովին համապատասխանում են ՄԱԿ-ի Կոնվենցիայում ամրագրված նման հանցագործության հանցակազմին բնորոշ հանցավոր գործողություններին:

Ավելին՝ հանուն ճշմարտության պետք է նշել, որ եթե Հայոց ցեղասպանության պարագայում, իսկապես, պատմական հավաստի փաստերով հնարավոր է ապացուցել բոլոր հինգ հանցավոր գործողությունների առկայությունը, ապա հրեական Հոլոքոստի դեպքում, Երրորդ Ռայխում նացիստական գաղափարախոսության և արիական տեսության տիրապետող լինելու պայմաններում, ուղղակի հնարավոր չէ բացահայտել մասնավորապես հրեա երեխաների՝ գերմանական ընտանիքներ փոխանցելու պատմական փաստեր: **Եվ եթե այս տեսակետից դիտարկենք հարցը, ապա ստացվում է, որ հրեական Հոլոքոստը որոշ վերապահումներով կարելի է համարել ցեղասպանության դասական օրինակ: Այս հանգամանքը, սակայն, որևէ հայազգի հետազոտողի չի կարող հանգեցնել այն մտքին, թե հրեական Հոլոքոստը ցեղասպանություն չէ, ի տարբերություն որոշ հրեա հետազոտողների, որոնք, ինչպես Պ. Նորան, փորձում են ամեն կերպ ապացուցել հրեական Հոլոքոստի բացառիկ լինելը ու նսեմացնել այդ հանցագործության այլ օրինակներ, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանությունը:**

Սակայն ուրախալի է, որ հրեա հետազոտողների շարքում նույնպես կան այնպիսի անհատներ, ինչպիսիք են «Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի» նախկին նախագահ **Իսրայել Չարնին**, ով քննադատում է հրեական պետության ժխտողական դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ, հայտարարելով, թե Հայոց ցեղասպանությունը և հրեական Հոլոքոստը բացարձակապես նույնական հանցագործություններ են, և ժխտել Հայոց ցեղասպանությունը, նույն է, թե ժխտել հրեական Հոլոքոստը²⁷: Չարնին նաև ընդգծում է, որ հենց 20-րդ դարի

26 Տե՛ս Права человека. Сборник международных договоров, т. 1, ч.2, Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994. с. 780-781.

27 Տե՛ս Чарни И. В. Подход к более широкому определению геноцида: правовое понятие со-

սկզբին կատարված Հայոց ցեղասպանության անպատիժ մնալը նացիստներին հրահրեց այդ նույն հանցագործությունը իրագործել արդեն հրեա ժողովրդի նկատմամբ: Անտարակույս, նա նկատի ունի գերմանական հրամանատարության առջև Ադոլֆ Հիտլերի արտասանած հանրահայտ ճառը, երբ նա հայտարարեց. «Ո՛վ է այսօր հիշում հայերի բնաջնջման մասին»²⁸:

Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի ընդհանուր գծերի համեմատությանն՝ ընդհանրապես, ապա բավարարվենք միայն այդ երկու նույնական հանցագործությունների առավել կարևոր տարբերությունները մատնանշելով:

1. Հայոց ցեղասպանության ժամանակ տեղաբնիկ հայ ժողովուրդը բնաջնջվեց իր պատմական հայրենիքում՝ եկվոր թուրքերի կողմից, այն դեպքում, երբ հրեական Հոլոքոստն իրականացվեց բնիկ գերմանացիների կողմից եկվոր հրեաների նկատմամբ՝ Գերմանիայում և եվրոպական այլ երկրների տարածքներում, որոնք չէին հանդիսանում հրեաների պատմական հայրենիքը:

2. Հայոց ցեղասպանության հետևանքով հայերի պատմական հայրենիքի մեծագույն մասը բռնագավթվեց, և նրանք սփռվեցին աշխարհով մեկ, այն դեպքում, երբ Հոլոքոստի հետևանքով հրեաները սկսեցին կենտրոնանալ իրենց պատմական հայրենիքում ստեղծված հրեական պետությունում՝ Իսրայելում:

3. Վերջապես, ի տարբերություն հրեական Հոլոքոստի, Հայոց ցեղասպանությունը դեռևս չի ճանաչվել, և հայ ժողովուրդը դեռևս հատուցում չի ստացել հանցագործ պետության՝ Թուրքիայի կողմից, այն դեպքում, երբ Գերմանիան ոչ միայն ճանաչել է, այլև տասնամյակներ շարունակ հատուցում է այդ հանցագործության համար ոչ միայն անհատներին և հրեական կազմակերպություններին, այլև Իսրայել պետությանը: Հաշվի առնելով այս իրողությունը, որոշ հետազոտողներ պնդում են, թե քանի դեռ հատուցումը տեղի չի ունեցել, ի դեմս Հայոց ցեղասպանության գործ ունենք շարունակվող հանցագործության հետ:

Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի միջև առկա այս հիմնական տարբերությունները ակնհայտորեն ցույց են տալիս, որ չնայած այն հանգամանքին, որ Հոլոքոստի ընթացքում զոհվածների թիվը գերազանցում է Հայոց ցեղասպանության զոհերին, այդուհանդերձ, Հայոց ցեղասպանությունն իր հետևանքներով ավելի ծանր անդրադարձ է ունեցել և շարունակում է ունենալ հայ ժողովրդի, քան Հոլոքոստը՝ հրեաների վրա:

բ) Ֆրանսիան իր մեղքի բաժինն ուներ հրեական Հոլոքոստում

Շոայի «յուրահատուկ» լինելու դրույթից, Պ. Նորան փորձում է ածանցել այն միտքը, թե իբր՝ Ֆրանսիան պարտավոր էր այդ հանցագործության ժխտումը քրեականացնել նաև այն պատճառով, որ Վիշիական Ֆրանսիան անուղղակի պատասխանատվություն է կրում հրեական Հոլոքոստի հա-

участия в геноциде и геноцид как следствие загрязнения и разрушения природной среды, Материалы I Московского Международного Симпозиума «Геноцид – преступление против человечества», М., 1997, с. 112.

28 Բարդակյան Գ.Պ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Եր., 1991, էջ 10:

մար, մինչդեռ Հայոց ցեղասպանության հետ նա ոչ մի կապ չունի²⁹:

Այսպիսով, Պ. Նորան ցեղասպանությունների աստիճանակարգման նպատակով կոնկրետ՝ Ֆրանսիայի տարբերակում հաշվի է առնում նաև այդ երկրի աննշության կամ ավելի ստույգ՝ մեղսակցության հարցը, ուստիև Հոլոքոստի ժխտման քրեականացումը փորձում է դիտել իբրև Ֆրանսիայի բարոյական պարտավորություն, որով ինչ-որ չափով փոխհատուցվում է տվյալ երկրի նախկին մեղքը, ինչը, ըստ Նորայի, բացակայում է Հայոց ցեղասպանության պարագայում:

Եթե անգամ այս կտրվածքով դիտարկենք Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը, ապա կպարզվի, որ այս դեպքում էլ Պ. Նորան չարաչար սխալվում է: Ֆրանսիան իր անուղղակի մեղքը քավելու և բարոյական փոխհատուցման խնդիր ունի և Հայոց ցեղասպանության, և՛ հրեական Հոլոքոստի դեպքերում: Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ՝ 1915 թ. մայիսի 24-ին Ռուսաստանի և Անգլիայի հետ մեկտեղ, Ֆրանսիան տեղի ունեցող հանցագործությունը դատապարտող հռչակագիր ընդունելով և այն «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություն» որակելով, պատերազմից հետո իր քաղաքականությամբ ուղղակի ձախողեց դրա համար Թուրքիային պատասխանատվության ենթարկելու գործընթացը: Չնայած նրան, որ Ֆրանսիան հանդիսացավ Հայոց ցեղասպանության համար Թուրքիային պատասխանատվության կանչելու և հանցագործության հետևանքների հաղթահարման տեսանկյունից երկու կարևոր փաստաթղթերի՝ Սևրի պայմանագրի և ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի Հայաստան-Թուրքիա սահմանի սահմանագծման իրավարար վճռի նախաձեռնողներից մեկը, սակայն նաև նրա հետևողական ջանքերով՝ այդ փաստաթղթերը մնացին թղթի վրա և կյանքի չկոչվեցին: Դեռ ավելին, 1921 թ. Ֆրանսիան Թուրքիայում իշխանության եկած նոր ուժերի հետ կնքեց Կիլիկիան հանձնելու մասին պայմանագիրը, որով փաստորեն նպաստեց կիլիկիահայության ցեղասպանության շարունակմանը արդեն քեմալականների կողմից: Այնպես որ, երբ Ֆրանսիան ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրենքը և փորձում է ընդունել նաև այդ հանցագործության ժխտումը քրեականացնող օրենք, դրանով ընդամենը ուշացած քայլեր է ձեռնարկում Առաջին աշխարհամարտում իր կրտսեր դաշնակից հայ ժողովրդի առաջ սեփական բարոյական պարտավորությունը կատարելու և նախկին սխալներն ու մեղքերը քավելու համար:

Ուստի լավ կլիներ, որ նման համեմատություններ անցկացնելուց և հապճեպ եզրակացություններ անելուց առաջ Պ.Նորան հավասարապես ուսումնասիրեր նաև Հայոց ցեղասպանության տարիներին Հայկական հարցում Ֆրանսիայի վարած քաղաքականությունը, և չսահմանափակվեր սոսկ՝ Վիշիական Ֆրանսիայի հակահրեական քաղաքականության մասին դատողություններով:

գ) Օրենքների հետադարձ ուժը կիրառելի է միայն հրեական Հոլոքոստի հետ կապված

29 Sté P. Nora, *Les lieux de mémoire*, t. 1, Paris, 1984, p. 10. URL://:http://www.lph-asso.fr/index.php?option=com_content&view=article&id=164%3Aloi-sur-les-genocides-une-bataille-perdue-pas-la-guerre&catid=53%3Aactualites&Itemid=170&lang=fr

Պ.Նորայի կարծիքով՝ օրենքի ռետրոակտիվ կիրառումը, ինչի վրա կառուցվել է Նյուրենբերգի վճիռը, պետք է սահմանափակվի միայն նացիտական հանցագործությունների շրջափուլով, ու քանի որ «Գեյստյի օրենքը» բխում է Նյուրենբերգյան տրիբունալի վճռից, ուրեմն դա պետք է լինի նման կարգի վերջին օրենքը³⁰: Այսպիսով, օրենքի հետադարձ ուժ ունենալու հարցում ևս Պ. Նորան առաջնորդվում է ցեղասպանությունների աստիճանակարգման և հրեական Հոլոքոստի բացառիկության մասին դրույթով:

Ֆրանսիացի պատմաբանը հավանաբար տեղյակ չէ, որ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» 1948 թ. Կոնվենցիայի ընդունումից 20 տարի անց՝ 1968 թ. նոյեմբերի 26-ին, ՄԱԿ-ն ընդունել է մեկ այլ կոնվենցիա՝ «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին»: Նշված կոնվենցիայում պայմանավորվող կողմերը ընդգծում են, որ «պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար պատասխանատվության կանչելու կամ պատժելու վերաբերյալ առկա որևէ հոչակագրում, ակտում կամ կոնվենցիայում նախատեսված չէ վաղեմության մասին դրույթ»³¹: Ավելին, նրանում ընդգծվում է, որ տվյալ կոնվենցիայով միջազգային իրավունքում համընդհանուր կիրառության մեջ է մտնում «այն սկզբունքը, համաձայն որի՝ պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար գոյություն չունի վաղեմության ժամկետ»³²:

«Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» կոնվենցիայի հենց առաջին հոդվածում հստակորեն նշված է այն պարտադիր դրույթը, որ «անկախ կատարման ժամկետից (ընդգծումը մերն է - Ա.Մ.) պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ որևէ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում»³³:

Այսպիսով, ընդգծելով, որ վերը նշված հանցագործությունների նկատմամբ նախկինում որևէ միջազգային փաստաթղթում գոյություն չի ունեցել վաղեմության ժամկետի մասին դրույթ, ինչպես նաև հաշվի առնելով այդ հանցագործությունների՝ միջազգային իրավունքի տեսակետից առանձնապես ծանր լինելու հանգամանքը, ՄԱԿ-ը նոր կոնվենցիայով միջազգային իրավունքում շրջանառության մեջ է դրել պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու սկզբունքը: Ակնհայտ է, որ տվյալ դրույթի կիրառումը բացառություն չի անում նշված հանցագործություններից որևէ մեկի համար, այլ այն համընդհանուր է տվյալ հանցագործությունների

30 Sté P. Nora, Historical identity in trouble”, URL//: http://www.lph-asso.fr/index.php?option=com_content&view=article&id=152&Itemid=182&lang=en

31 Права человека. Сборник международных договоров, с. 786.

32 Նույն տեղում:

33 Права человека. Сборник международных договоров, с. 786.

հանցակազմերին համապատասխանող բոլոր դեպքերի համար:

Կոնվենցիան նաև պարզաբանումներ է տալիս այն հարցի հետ կապված, թե ի՞նչ է հասկացվում «պատերազմական հանցագործություններ և մարդկության դեմ կատարված հանցագործություններ» անվան տակ: Համաձայն կոնվենցիայի երկրորդ հոդվածի՝ «մարդկության դեմ կատարված հանցագործություն է համարվում նաև ցեղասպանության հանցագործությունը, որը սահմանվել է ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայով, նույնիսկ եթե այդ գործողությունները այն երկրում, որտեղ կատարվել են, չեն համարվում ներքին օրենսդրության խախտում»³⁴:

Եթե հաշվի չառնենք 1919 թ. նախկին երիտթուրքական կառավարության անդամների դատավարության ֆարսը թուրքական ռազմական տրիբունալում, ապա կարելի է պնդել, որ կոնվենցիայի սույն հոդվածը անմիջականորեն և այն էլ՝ կրկնակի հիմքերով վերաբերում է հենց Թուրքիային: Պատճառն այն է, որ թուրքական պետությունը և հանցագործության իրական կազմակերպիչները խուսափեցին պատասխանատվությունից, Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիան բանտերից ազատեց ռազմական տրիբունալների վճիռներով նաև Հայոց ցեղասպանության համար դատապարտված հանցագործներին, իսկ ներկայիս Թուրքիան անհերքելի փաստերի առկայության պայմաններում շարունակում է ժխտել կատարված հանցագործությունն ու պնդել ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948 թ. Կոնվենցիայի վաղեմության ժամկետի վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի 1968 թ. Կոնվենցիան ուղղակիորեն հղում է կատարում 1948 թ. Կոնվենցիայի վրա, կարելի է արձանագրել, որ առաջինը փաստորեն երկրորդի լրացումն ու շարունակությունն է, և պետք է կարծել, որ այս նոր կոնվենցիայով ՄԱԿ-ը, ըստ ամենայնի, վերջակետ դրեց 1948 թ. Կոնվենցիայի կիրառման և նրա հետադարձ ուժ ունենալու հարցում:

դ) Անցյալի մասին չի կարելի դատել ներկայի չափանիշներով, բանգի դրանով մարդկության ողջ պատմությունը կվերածվի ցեղասպանությունների պատմության

Պիեռ Նորան նաև պնդում է, թե նման օրենքներ ընդունելով՝ կարող ենք ընկնել ժամանակավրեպության մեջ, այլ ժամանակների և այլ մշակույթների մարդկանց վերագրելով վարքի այնպիսի հուզական դիրքորոշումներ և նորմեր, ինչը հատուկ է եղել պատմագետին և իր ժամանակին³⁵: Այս ձևակերպումը հեղինակը փորձում է հիմնավորել նրանով, որ «մարդկության դեմ հանցագործություն» հասկացությունը ստեղծվել է արդի իրադարձությունների համար, որոնք ի զորու չէր տեղավորել բանականությունը, և որոնք այնքան հրեշավոր ու մասշտաբային էին, որ չեն գետնիցվում ոչ մի իրավաբանական կատեգորիայի ներքո: Դա բնորոշում է ներկան և չի վերաբերում ոչ հուշերին, ոչ հիշողությանը, ոչ

34 Նույն տեղում, ս. 787.

35 Տե՛ս П. Нора: «Историки поняли, что законы – очень опасная вещь».

URL:// <http://urokiistorii.ru/current/view/2010/31/nora-ui>

անցյալին³⁶:

Ի գիտություն Պ. Նորայի ուզում ենք փաստել, որ նախ՝ «մարդկության դեմ հանցագործություն» եզրույթը նորամուծություն չէ, այլ ունի բավական հեռու գնացող պատմական արմատներ: **«Մարդկության օրենքներ»** ձևակերպումը առաջին անգամ պաշտոնապես շրջանառվել է դեռևս Հաագայի 1899 թ. խաղաղության կոնֆերանսում ընդունված **«Պատերազմի վարման օրենքների և սովորույթների մասին»** առաջին կոնվենցիայում, որով սահմանվում էին «մարդկության օրենքների» սկզբունքները, և որոնցով դատապարտվում էին խաղաղ բնակչության նկատմամբ բռնություններն ու կոտորածները: Այս ձևակերպումը, ինչպես նաև իրավական բնութագրումը դրա հեղինակ՝ ռուս ակնասվոր իրավաբան-միջազգայնագետ պրոֆեսոր Ֆ.Մարտենսի անունով հայտնի է **«Մարտենսի վերապահում»** անվամբ: «Մարտենսի վերապահումը» վերահաստատվեց նաև Հաագայի 1907 թ. խաղաղության երկրորդ համաժողովի ընթացքում՝ 1899 թ. կոնվենցիայի աննշան խմբագրական ուղղումներով տեղափոխվելով 1907 թ. հոկտեմբերի 18-ի՝ **«Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին»** նոր կոնվենցիայի նախաբան: Այստեղ մասնավորապես նշվում էր, որ «մինչ այն պահը, երբ հնարավոր կլինի ստեղծել պատերազմի օրենքների առավել ամբողջական ժողովածու, պայմանավորվող բարձր կողմերը հարկ են համարում ընդգծել, որ իրենց ընդունած որոշումներով չնախատեսված դեպքերում բնակչությունը և պատերազմող կողմերը գտնվում են միջազգային իրավունքի նորմերի պաշտպանության ներքո, քանզի դրանք բխում են ժողովուրդների միջև հաստատված սովորույթներից, **մարդկության օրենքներից** (ընդգծումը մերն է – Ա.Մ.) և հասարակական գիտակցության պահանջներից»³⁷:

Այս ձևակերպումներով կոնվենցիայի հեղինակները, ի դեմս Ֆ.Մարտենսի և մյուսների, գիտակցելով, որ «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիայի շրջանակներում չեն կարող նախատեսվել պատերազմի օրենքների և սովորույթների խախտման բոլոր դեպքերը և պատիժներ սահմանվել դրանց համար, հայտարարում էին, որ չնախատեսված դեպքերի պարագայում խաղաղ բնակչությունը գտնվում է միջազգային իրավունքի նորմերի պաշտպանության տակ: Տվյալ դեպքում՝ խաղաղ բնակչության զանգվածային բնաջնջումը, ինչն այն ժամանակ հայտնի էր կոտորածներ, ջարդեր անվանումներով, ոչ այլ ինչ է, քան չնախատեսված դեպք, ուստի տվյալ պարագայում պետք է գործեն «մարդկության օրենքները»:

Այս կոնվենցիան փաստորեն առաջին բազմակողմ միջազգային իրավական փաստաթուղթն է, որում խոսվում է մարդկության օրենքների և դրանց հնարավոր խախտման մասին: Կոնվենցիան չէր անդրադառնում կոնկրետ խմբերի ոչնչացման հարցին, սակայն տրամաբանական է, որ եթե արգելվում էր խաղաղ քաղաքիական բնակչության ոչնչացումն առհասարակ, ապա ինքնին ենթադրելի է, որ նույնը վերաբերում էր նաև այդ

36 Sté P. Nora, "Historical identity in trouble", URL://: http://www.lph-asso.fr/index.php?option=com_content&view=article&id=152&Itemid=182&lang=en

37 Международное право. Ведение военных действий. Сборник Гаагских конвенций и иных международных документов, М., 2001, с. 19.

բնակչության մաս հանդիսացող կոնկրետ խմբերին, որոնց ոչնչացումը նույնպես արգելվում էր: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ցեղասպանության հանցագործությունը միջազգային իրավունքի հետագա զարգացման արդյունքում գնահատվեց որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն, այսինքն՝ հանցագործություն, որով խախտվում են մարդկության օրենքները, կարելի է վստահաբար պնդել, որ հենց տվյալ կարևոր միջազգային իրավական փաստաթուղթն է հետագայում ծնունդ տվել ցեղասպանության (գենոցիդի)՝ «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» լինելու միջազգային սահմանմանը:

Կոնվենցիայի նախաբանում տեղ գտած «մարդկության օրենքների» սկզբունքը լրացնելու է գալիս նրա հավելվածի 3-րդ հոդվածում այն ընդհանուր դրույթի ամրագրումը, որ պատերազմող կողմը պատասխանատվություն է կրում իր գինված ուժերի կազմում գտնվող անձանց բոլոր գործողությունների համար և պետք է հատուցի հասցված վնասների դիմաց, եթե կան դրա հիմքերը³⁸: Փաստորեն պատերազմող կողմը պատասխանատվություն էր կրելու հակառակորդի տարածքում կատարված պատերազմական հանցագործությունների համար, որոնք կարող էին կատարվել ոչ միայն գինվորականների, այլ առավելապես անգն խաղաղ բնակչության նկատմամբ, որոնք չէին կարող դիտվել իբրև պատերազմող կողմ:

Այսպիսով, ինչպես նշվում է կոնվենցիայի նախաբանում, անհնար է կանխատեսել պատերազմական հանցագործությունների բոլոր դեպքերը, այդ թվում նաև այնպիսիք, երբ պատերազմող կողմը կարող է կոնվենցիայով արգելվող ուժային գործողություններ իրականացնել նաև սեփական անգն բնակչության նկատմամբ՝ նրանց դիտելով իբրև հակառակորդին օժանդակող ուժ: Կոնվենցիայի նախաբանի տրամաբանությամբ այս դեպքերը նույնպես դատապարտելի էին, քանզի «չնախատեսված դեպքերում խաղաղ բնակչությունը գտնվում է միջազգային իրավունքի նորմերի պաշտպանության ներքո»³⁹: Այս առումով ամենևին պատահական չենք համարում այն փաստը, որ Օսմանյան կայսրությունը 1899-ի առաջին՝ «Պատերազմի վարման օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիան ստորագրելով՝ վերապահում կատարեց հենց 3-րդ հոդվածի կապակցությամբ⁴⁰:

Հենց Հաագայի կոնվենցիայի ու մասնավորապես՝ «Մարտենսի վերապահման» «մարդկության օրենքների» ոգով էր, որ արդեն Հայոց ցեղասպանության ընթացքում՝ 1915 թ մայիսի 24-ին, Անտանտի տերություններն ընդունեցին համատեղ հայտարարություն, որով դատապարտվում էին Օսմանյան կայսրության կողմից հայ բնակչության զանգվածային սպանությունները կայսրության ողջ տարածքում: 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հայտարարությամբ Անտանտի տերությունները Օսմանյան կայսրությունում կատարվող հայերի զանգվածային կոտորածներին տալիս էին թե՛

38 Տե՛ս նույն տեղում:

39 Международное право. Ведение военных действий, с. 19.

40 Տե՛ս Վարդանյան Վ., Հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր N 1 (17), Եր., 2006, էջ 39:

քաղաքական և թե՛ իրավական գնահատական՝ դրանք համարելով «հանցագործություն ուղղված մարդկության և քաղաքակրթության դեմ»⁴¹: Այս փաստաթղթի հրապարակումը հայերի զանգվածային կոտորածների ընթացքում, ևս մեկ վառ ապացույց է այն բանի, որ հայերի հետ կատարվածը համարվել է **հանցագործություն՝ համաձայն տվյալ պահին գործող միջազգային իրավական նորմերի**:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո կնքվեցին Վերսալի, ապա Սևրի հաշտության պայմանագրերը համապատասխանաբար՝ Գերմանիայի ու Թուրքիայի հետ, և դրանցում հստակորեն նշված էր, որ պետք է ստեղծվեն միջազգային դատական ատյաններ պատերազմական հանցագործներին դատելու համար⁴²: Թերևս սրանից վախենալով էր, որ Թուրքիան հապճեպ ձեռնարկեց երիտթուրքերի դատավարությունը՝ հայերի զանգվածային սպանությունների պատասխանատվությունը բարդելով միայն «Միություն և առաջադիմություն» կուսակցության ու նրա առաջնորդների վրա և փորձելով խուսափել թուրքական պետության պատասխանատվությունից, ինչը միանշանակ կարող էր ծագել միջազգային ատյանում նման դատավարություն սկսելու պարագայում:

1948 թ. մայիսի 28-ի զեկույցում ՄԱԿ-ի «Պատերազմական հանցագործությունների» հանձնաժողովը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել հատկապես Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածին և մեկնաբանել է այնպես, որ դրանով հաղթանակած տերությունները նպատակ էին հետապնդում ի կատար ածել 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագրի պարտավորությունն առ այն, որ պատասխանատվության կանչվեն մեղավորները «մարդկության դեմ կատարած հանցագործությունների» համար, այսինքն՝ այն հանցագործությունների, որոնք թուրքական տարածքում կատարվել էին թուրքական քաղաքացիություն ունեցող ազգությամբ ոչ թուրք անձանց՝ հայ կամ հույն հպատակների նկատմամբ, ինչը, հանձնաժողովի կարծիքով, նախադեպ է ծառայել Նյուրնբերգի և Տոկիոյի տրիբունալների կանոնադրությունների համապատասխանաբար 6c և 5c հոդվածների համար, այն է՝ մարդկության դեմ կատարված հանցագործություններ⁴³:

Այսպիսով, ցեղասպանության հանցագործությանը տրված «մարդկության դեմ կատարված հանցագործություն» որակումը, որն առկա է Հաագայի 1899 թ. և 1907 թ. կոնվենցիաներում և 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հայտարարության մեջ, ոչ պատահականորեն, այլ օրինաչափորեն է արտացոլվել նաև ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» (1948 թ.) ու «Պատերազմական հանցագործություններ

41 Стн Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства. 1878-1917, М.-Л. 1931-1940, серия III, т. 7, ч. 2, с. 252.

42 Стн Հովհաննիսյան Վ., Սևրի 1920 թ. օգոստոսի 10-ի հաշտության պայմանագիրը և Հայոց պահանջատիրությունը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008թ., «Գիտական զեկույցումների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 20:

43 Стн Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор Ю.Г.Барсегов, т. 2, ч.1, М., 2003, с. 651.

րի և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» (1968 թ.) կոնվենցիաներում: Ուրեմն՝ հայերի զանգվածային սպանությունները, անկախ «գենոցիդ» եզրույթի կիրառումից, համարվել են հանցագործություն՝ համաձայն մինչև Հայոց ցեղասպանությունը, ցեղասպանության ընթացքում և դրանից հետո գործող միջազգային իրավունքի նորմերի:

Մինչդեռ Պ. Նորան պնդում է, որ եթե անցյալի մասին դատենք՝ կիրառելով նրա նկատմամբ արդի բարոյական չափանիշները, այդժամ ողջ պատմությունը կարող է ներկայանալ իբրև հանցագործությունների պատմություն⁴⁴: Սրանով ֆրանսիացի պատմաբանը միտումնավոր կերպով փորձում է շրջանցել ցեղասպանության հանցագործության սահմանումը և նսեմացնել մասնավորապես Հայոց ցեղասպանությունը՝ արհեստական հավասարության նշան դնելով մարդկության պատմության ընթացքում կատարված տարբեր արյունալի դեպքերի և իրական ցեղասպանությունների միջև: Մինչդեռ հանրահայտ է, որ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված և 1951 թ. հունվարի 12-ին ուժի մեջ մտած ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայում հստակ սահմանված է ցեղասպանության հանցագործությունը: Կոնվենցիայի համաձայն՝ ցեղասպանությունը որևէ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խումբը **ամբողջությամբ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ** (ընդգծումը մերն է - Ա.Մ.) կատարվող հետևյալ գործողություններն են՝

1. նշված խմբի անդամների սպանությունը,
2. նշված խմբի անդամներին լուրջ մարմնական վնասվածքներ կամ մտավոր խեղում հասցնելը,
3. նշված խմբի համար այնպիսի անմարդկային կենսական պայմանների ստեղծումը, որոնք միտված են նրա լրիվ կամ մասնակի ոչնչացմանը,
4. նշված խմբի ծնելիության կանխմանն ուղղված գործողությունները,
5. նշված խմբի երեխաների բռնի փոխանցումը այլ խումբ⁴⁵:

Ավելին, ի տարբերություն Նորայի ակնհայտորեն՝ սովետական դատողությունների, միջազգային իրավունքում արդեն վաղուց հստակեցված է, որ կոնկրետ խմբի նկատմամբ թվարկված գործողությունները կարող են որակվել որպես ցեղասպանություն այն դեպքում, երբ անառարկելիորեն ապացուցվում է, որ տվյալ խմբի նկատմամբ կատարվող գործողությունների կազմակերպիչները **մտադրություն են ունեցել ամբողջությամբ կամ մասնակի ոչնչացնել այն որպես այդպիսին**: Այս տեսակետից գոյություն ունեն բազմաթիվ փաստեր ու ապացույցներ առ այն, որ երիտթուրքական վարչակարգը մտադրություն ու նպատակ է ունեցել իր պատմական հայրենիքում ոչնչացնել հայ ժողովրդին, ուստի, ի տարբերություն մարդկության պատմության մեջ տարբեր խմբերի նկատմամբ կատարված բռնությունների, կոտորածների ու ջարդերի, հայերի, ճիշտ այնպես, ինչպես և հրեաների նկատմամբ կատարվածը, ըստ

44 Տևն Ս. Нора: «Историки поняли, что законы – очень опасная вещь» URL:// <http://urokiistorii.ru/current/view/2010/31/nora-oi>

45 Տևն Права человека. Сборник международных договоров, с. 780-781.

միջազգային իրավունքի նորմերի, լիովին համապատասխանում է ցեղապանություն հանցագործության հանցակազմին:

ե) Ֆրանսիական խորհրդարանը չէ, որ պետք է գնահատի պատմական դեպքերը

Կարծում ենք, որ իրենց պատմական հայրենիքում հայերի ծրագրված ու զանգվածային բնաջնջմանը «ցեղասպանություն» որակումը տալու հարցը բնավ էլ չի դրվում ֆրանսիական խորհրդարանի վրա, ինչպես փորձում է ներկայացնել Պ. Նորան: Այդ հանցագործության որակումը վաղուց արդեն տրված է ինչպես միջազգային պաշտոնական կառույցների՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Փոքրամասնությունների խտրականության կանխարգելման և պաշտպանության ենթահանձնաժողովի 1973 և 1985 թվականների զեկույցներում⁴⁶ և Եվրախորհրդարանի 1987 թ. հունիսի 18-ի «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևում⁴⁷, այնպես էլ ոչ կառավարական միջազգային մասնագիտացված կազմակերպությունների համապատասխան բանաձևերում՝ Ժողովուրդների մշտական տրիբունալ (1984 թ.), Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիա (1997, 2005, 2007 թ.)⁴⁸ և այլն: Այնպես, որ Պ.Նորան կարող է հանգիստ լինել այն հարցում, որ ֆրանսիական խորհրդարանը չէ, որ իր վրա է վերցնում Հայոց ցեղասպանության որակման պատասխանատու գործը, այլ նա ընդամենը միանում է արդեն տրված որակումներին:

Այս կապակցությամբ Պ.Նորան նշում է, որ եթե Ֆրանսիան այդ կերպ փորձում է ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչել տալու առումով, ապա արդյունքը համոզիչ չէ. ֆրանսիական որոշումը կարող է միայն սրել թուրքական ազգայնականությունը և արգելափակել անցյալի ճանաչման ասպարեզում առաջխաղացման ցանկացած ձև: Ավելին, նա նաև հանդիմանում է հայկական կողմին, որ վերջինս մերժեց 2005 թվականին Թուրքիայի առաջարկած պատմաբանների երկկողմ հանձնաժողովի ստեղծման և արխիվները բացելու առաջարկը⁴⁹:

Իրականում խնդիրը ոչ թե տվյալ օրենքի միջոցով Թուրքիայի վրա ճնշում գործադրելն է, ինչպես դա փորձում է ներկայացնել Պ.Նորան, այլ այն, որ տվյալ քայլով Ֆրանսիան պետք է փորձի մաքրել իր խիղճը և որոշ չափով ապաշխարել, քանի որ քրիստոնյա հայ ժողովրդի նկատմամբ ժամանակին իրականացրել է անարդար ու մարդասիրությանը հակասող քաղաքականություն, նրա ձակատագիրը դարձրել է իր քաղաքական շահերը սպասարկող մանրադրամ՝ ոտնահարելով ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի տարրական իրավունքները: Դա հարկավոր է նախևառաջ Ֆրանսիային, որն իրեն համարում է ժողովրդավարության և

46 Տե՛ս Генотид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 665-666

47 Տե՛ս European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag/pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf

48 Տե՛ս Генотид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 739.

49 Տե՛ս P. Nora, Loi sur les génocides : une bataille perdue, pas la guerre, URL://:http://www.lph-asso.fr/index.php?option=com_content&view=article&id=164%3Aloi-sur-les-genocides-une-bataille-perdue-pas-la-guerre&catid=53%3Aactualites&Itemid=170&lang=fr

ՀԻՄՆԱԲԱՐՆԵՐ
Ե (ԺԵ) ԳԱՐԻ, ԹԻՎ 2 (42) ԱՊՐԻլ-ԽԱՆԻՒ, 2013
ՎԷՄ համահայկական հանդես

մարդու իրավունքների պաշտպանության բնօրրանը հանդիսացող երկիր:

Ինչ վերաբերում է թուրքական առաջարկի մերժման մասին հանդիմանանքին, ապա այս կապակցությամբ վստահաբար կարող ենք պնդել, որ հազիվ թե Պ. Նորան համաձայներ մասնակցել հրեական Հոլոքոստի լինել-չլինելու հարցը պատմաբանների հանձնաժողովում քննարկելուն, քանզի նման քննարկումն ինքնին կնշանակեր անարգել և կասկածի տակ դնել Հոլոքոստի շուրջ վեց միլիոն նահատակների հիշատակը, ինչն էլ փաստորեն հայկական կողմին առաջարկում էին թուրքերը:

Իսկ ահա արխիվները երկուստեք բացելու թուրքական կոչը թմրկահարելուց առաջ Ֆրանսիական ակադեմիայի անդամ հարգարժան պատմաբանը պարտավոր էր գոնե տեղյակ լինել այն մասին, որ թուրքական արխիվները մի քանի անգամ մաքրագերծվել են, և հայերի զանգվածային սպանությունների մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթերն արդեն վաղուց ոչնչացվել են: Իսկ ինչ վերաբերում է հայկական արխիվներին, ապա, ի տարբերություն թուրքականի, դրանք միշտ բաց են եղել և ի դեպ, հասանելի են եղել նաև թուրք հետազոտողների համար: **Տվյալ պարագայում՝ չիմացությունը կամ անտեղյակ ձևանալը հավասարապես պատիվ չի բերում միջազգային ճանաչում ունեցող պատմաբանին:**

Ամփոփելով վերը նշվածը, պետք է փաստենք, որ 2001 թ. հունվարի 29-ի օրենքով Ֆրանսիան վերահաստատեց հրեական Հոլոքոստից տասնամյակներ առաջ՝ Հայոց ցեղասպանության կատարման պահին Անտանտի երեք տերությունների ընդունած համատեղ հռչակագրում այդ հանցագործությանը տրված՝ «հանցագործություն՝ ուղղված մարդկության դեմ», այն է՝ «ցեղասպանություն» գնահատականը: 2012 թ. հունվարի 23-ին Ֆրանսիան փորձեց կատարել հաջորդ հետևողական քայլը և քրեական պատասխանատվություն սահմանել Հայոց ցեղասպանության ժխտման համար: Սակայն Սահմանադրական խորհրդի կողմից, ոչ պատշաճ հիմնավորումներով, հրեական Հոլոքոստի հետ մեկտեղ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքը ճանաչվեց հակասահմանադրական, և այդպիսով գործընթացը ժամանակավորապես կասեցվեց: Ներկայումս շրջանառության մեջ դրված օրենքի նոր նախագիծը իր մարդասիրական պարտքը կատարելու նոր հնարավորություն է ֆրանսիական պետության և հասարակության համար: Ֆրանսիան դա պարտավոր է անել ոչ միայն և ոչ այնքան՝ հանցագործության զոհ հանդիսացող հայ ժողովրդի և Ֆրանսիայի հայկական համայնքի համար, որքան մարդու իրավունքների պաշտպանության դարավոր ավանդույթներ ունեցող երկրի իր համբավն ու հեղինակությունը պաշտպանելու և վերջապես՝ Եվրամիության առջև ստանձնած իր պարտավորությունները կատարելու նպատակով, առավել ևս, որ օրենքի նոր նախագիծը հիմնվում է հենց այդ պարտավորությունների վրա:

HISTORY AND RIGHT

The poorness of Pierre Nora’s ”facts” against the law of criminalization of the Armenian Genocide’s denying

Armen Ts. Maruqyan

ՀԻՄՆԱԲԱՐՁՐԵՐ

It is shown in the article that the arguments about the Jewish Shoah and unique nature of the “law of Geysso” of the eminent historian, founder and president of the organization “Freedom for history” Pierre Nora, who is involved in political manipulations against the acceptance of law of the criminalization of Armenian Genocide’s denying on January 23, 2012, are not able to stand against scientific criticism. If Nora is against “memorial laws”, then he must be also against “Law of Geysso”, in other case there is no difference between these two genocides.

As to the statement of Nora about the idea that the acceptance of “law of Geysso” was the moral duty of France, as that country had some role in the Jewish holocaust, then the policy of France after the I World War can prove that this country has the same moral duty also for the Armenian Genocide.

The point of view of Nora about the limitation of retroactive effect of laws only for Holocaust is directly contrary to the “United Nations’ Convention of November 26, 1968 about not to apply any the period of limitation over war crimes and crimes against humanity”. By this document the international law of not to apply the principle of time limitation for all cases without exception for the crimes, including the UN Convention on Genocide of 1948, was put into circulation.

To the misgivings of Nora to judge the past by the criteria of the present and to make the history of mankind become a history of genocides the author of the article indicated that, first, independently of the application of the definition of “genocide” the Armenian Genocide was qualified by the Entente powers, including France as a “crime against humanity”. Already in 1915 what happened with the Armenians was considered a crime, based on the Convention of Hague in 1899 about “laws and customs of war” and particularly, on the “spirit of the laws of humanity” of Martens’ reservation, that is, it was estimated to be a crime only based on the existing international legal norms.

In addition, in accordance with the United Nations Convention of 1948 about the “Prevention and Punishment of the Crime of Genocide”, to qualify a massacre as a genocide it is necessary to prove that the intention of the organizers of this crime has been to completely or partially destroy the group as such. It is shown in the article that this provision is equally applicable to both the Armenian Genocide and the Jewish Holocaust cases.

2013 թվականի հունիսի 2 (42) ամսագրի համար, 6 (68) քառի, թիվ 2

ՀԻՄՆԱԲԱՐՁՐԵՐ
համահայկական հանդես